ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

16-ը հոկտեմբերի 2024թ.

ՈՒՂԵՐՁ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

2004 թվականից ՀՀ կառավարության որոշմամբ հայկական առաջին պարբերականի հրատարակման օրը՝ հոկտեմբերի 16-ը, նշվում է որպես Հայ մամուլի օր:

Ժամանակի պահանջներին համընթաց ամենատարբեր բնագավառներին վերաբերող տեղեկատվությունն այսօր մեծապես ստանում ենք հեռուստատեսությամբ և համացանցով: Մեր օրերում ազատ և արագ գործող մամուլը ապահովում է ոչ միայն իրազեկվածություն, այլ նաև մեծապես ներգործում է լսարանի ըմբռնման, կարծիքի ու դիրքորոշման վրա, ուստի անաչառությունն ու արդարմտությունը պիտի լինեն զանգվածային լրատվամիջոցների աշխատանքի առանցքային սկզբունքը:

Հայ մամուլի օրվա առիթով շնորհավորում եմ ոլորտի ներկայացուցիչներին, առանձնահատուկ շնորհավորում եմ Աբովյան համայնքում գործունեություն ծավալող լրատվամիջոցներին ու հեռուստաընկերությանը, որը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում համայնքի նշանակալի իրադարձությունները, լավագույնս անդրադառնում և լուսաբանում է համայնքում կատարվող աշխատանքները: Գնահատելի է մամուլի շուրջօրյա պատասխանատու աշխատանքը և մեծ դերը հանդուրժող հասարակություն ձևավորելու գործում:

Կրկին շնորհավորելով՝ ոլորտի ներկայացուցիչներին մաղթում եմ մասնագիտական հաջողություններ և անխափան եթեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ